

տեսնելու գեերնիս ալ՝ խեղճ ողօրմելի փատի շտեմարանին մէջ սպասող տղան է, որ չամարձակեցար առջենիս հանելու : Ա'ենք, ըսի, աս բաներուս ձեռնածութիւն կ'ըսենք, և կուրաբար չենք կրնար հաւատք ընծայել :

Ա' ըսածներուս վրայ կատղելով, և շփոթեալ՝ ինչ ըսելիքը չփիտնալով, սկսաւ սպառնալով ձայնը բարձրացընել և ըսել, թէ զգոյշ կեցիր՝ դիւաց զօրութեամբ գլուխդ մեծ վնասներ կը բերեմ : Այդպիսի խօսքերով, ըսի առանց այլայլելու, զիս չես կրնար վախցընել քեզի հրաման, ինչ որ կ'ուզես նէ՝ ըրէ, ըսի . թէ որ այդ կարողութիւնը ունիս նէ՝ ինչ հարկ կայ սպառնալու . սենեակդ մտիր, սատանաները գլուխդ ժողվէ, ինչ կ'ուզես նէ ըրէ որ տեսնեմ : Այդպիսի խօսքերով գնա ռամիկ ժողովուրդը խաբէ, ամպէր ծխեմ պիտի ըսելով՝ բերած ամպէրնին ստակ ըրէ : Ա' ըսելով դուրս ելայ, իմանալով որ ինչպէս կոպիտ միջոցներով պարզամիտները կը խաբեն եղեր, առանց ձեռնածուներուն վարպետութիւնն ունենալու : Եւ ահա տասնըհինգ տարիէն աւելի է քանի որ ողորմելի տէրփիշը այդ սպառնալիքը ըրաւ, և դեռ վնաս մը չկրեցի :

* *

Որդամոլ Տաբրու Կարագէր :

Որդամոլ, ըսելով՝ չեմ իմանար հոս անսնք, որ իրենց երջանկութիւնը կերուխումի վրայ դրեր՝ այնչափ կ'ուտեն ու կը խմեն, մինչև առողջութիւննին ալ կը կորսընցունեն, հանդերձ պժգալի հետեանքներով՝ որ մինակ ալբաւական ատելի կ'ընեն որկրամոլութեան ախտը : Այս ես հոս որկրամոլըսելով՝ կ'իմանամ սովորական կերուխում սիրող մարդ մը, որ իրեն ախտը չսանձելով, ու իրեն

ծակաչք կերպովը՝ որկրամոլութեան տիտղոսը բաւականապէս կ'արդիւնաւորի : Իսանկի մը հետ սեղանակից եղողները՝ աւելի համը կ'առնեն ասնկարագրիս :

Մէն բանէն առաջ ձրի սեղան կը փնտըռէ . սեղանը օրհնուելու ատենը՝ կը սկսի աչքը կերակուրներուն վրայ պտըտցընել՝ դիտել որ իր ախորժած բաներն են թէ չէ : Հայր մերը լմբնցածին պէս՝ հեռուանց չճանցած մէկ բանը կայ նէ՝ պնակը ձեռքը կ'առնէ, ու մօտանց կը նայի, կը հարցընէ թէ ինչ կերակուր է : Դէնջակը վրան առնելու ատենը՝ ՈՒեղք որ ասկէս օր այնչափ ախորժակ չունիմ կ'ըսէ . բայց ուտելու ատենը աղէկ կ'երենայ ունի թէ չունի : Ապուրը կը լմբնցընէ չիլմբնցըներ՝ Ամսոն որ աս առաւատ նախաճաշիկս ուշ ըրի, ախորժակս գոց է ըսելով, ամենէն առաջ ինքը խաշածին ձեռք կը զարնէ : ՈՒեկ պատառը չկըլլած՝ մէկալը բերանը կը խոթէ . անանկ որ՝ բանի մը պատախան տալ պէտք ըլլայ նէ, լեցուն թուշերովկարծես թէ չըլսուած լեզու մը կը խօսի : Ուտելու ատեն՝ խօսակցութիւն ընելու տեղն է կ'ըսէ մտքէն, ու իր բանին գործքին հետ կ'ըլլայ . թէպէտ և խեղճը առատուանց ուշ նախաճաշիկ ըրեր է, ախորժակը բաց չէ :

Ուտելու ատենը աչքը ուրիշներուն պնակին մէջն է . նոր կերակուր մը գայ սեղանը նէ, մէկէն կը դիտէ ո՞ր կտորն է մեծն ու աղէկը՝ որ ան առնէ : Ոիրած մէկ բանը գայ նէ, մէկէն իմ ախորժած կերակուրս է ըսելով՝ ձեռքը կ'երկընցընէ, ու թէպէտ առտուածն ուշ նախաճաշիկ ըրեր է՝ աղէկ մը անկեց ալկ'ուտէ : Ինքը զինքը անմեղադիր ընելու համար ալ լիս իրիկունները ընթրիք ընելու սովորութիւն չունիմ, անոր համար կէս օրը քիչ մը աւելի կ'ուտեմ կ'ըսէ . իրիկուան ըրած ընթրիքս՝ ապուր մը, խորոված մը, անուշեղէն մը, պանիր ու պտուղ է : Այնտալդ կը բռնէ՝ որ

անկից աւելի բան կ'ուտուի՞ մի, չէ թէ միայն իրիկուան ընթրիք, չապա կէս օրուան Ճաշ ընելու համար ալ գրեթէ :

Պինակիները անձնկ փայլուն ու հացով մաքրած կ'ելեն առջեւէն, որ լուալու կարօտութիւն չմընար : Ինէ որ համարձակիս ու ըսես իրեն՝ Պարոն կ'երեւնայ թէ հրամանքդ Լուրոպա քալած, ու առանց որկրամոլութեան՝ շատ ուտելու արուեստը աղէկ սորվեր ես, պատասխան կուտայ . Երաւէ, բժիշկներէն ալ լսեր եմ որ մարդուս ստամոքսը առածքական է, քիչով ալ կը լեցուի, շատին ալ տեղիք կուտայ . բայց ես քիչ անգամ երկրորդին փորձը ըրեր եմ, որովհետեւ բարեկամներու քով կերակուրի քիչ կ'երթամ :

Անուշեղէնները սեղան կուգան . Վիչ մը անուշը կերակրոյ վրայ մարսեցուցիչ է ըսելով, աղէկ մը անոնց կողն ալ կը մտնէ : ()զի կամ ամպէրէնէ կը հրամցընեն . գաւաթը ձեռքը բռնած՝ պուտիկ մը բերանը կ'առնէ, բերնին չորս դին կը պտըտցընէ, ամէն մէկ ակւային քովին կ'անցընէ, վեր կը տանի վար կը բերէ, կըլլէմ մի չկըլլէմ մի, վերջապէս կ'որոշէ կըլլէլու . բայց կըլլէլէն ետքը՝ կարծես թէ կը զզջայ որ դեռ աղէկ մը համը կրնար առնուլ : Իս ոճով ինչուան որ գաւաթին տակը հասնի նէ, յայտնի կ'երեցընէ՝ որ Լուրոպա քալած, և ուտելու խմելու արուեստը աղէկ սորվեր է, մանաւանդ երբոր տանուտէրը հաշիւ չպիտօր ցուցընէ :

Ինչ տարբերութիւն ուրիշ սեղանակիցներէն, որ իրենց կարեւոր մնուն դը առնելու համար՝ սեղան նստեր են . ինչ մեղադրելի բան կ'երեւնայ անոնց աչքին՝ ասանկ կերուխումի ուրը : Խակ ինքը ուռած կարմըցած՝ կը սկսի կերակուրներու ու պատառաբոյծներու վրայ պատմութիւններ պատմել . աշխըթքիս մէջ ինչ ուտօղներ կան . ձրի Ճաշը ինչ համով բան է, գրեթէ գլսաւոր համեմն է կերա-

կուրի . և թէ ինքը ինչպէս չէ վարժած շատ ու ձրի ուտելու, բայց բարեկամներու հրաւերքը չմերժելու համար՝ անսնց սեղանը կ'երթայ, ու տանտիրոջը պատիւ ընելու համար՝ կերակուրներուն համը կը նայի : Ու երջապէս ինքը զինքը սակաւապէտ ու կերուխումի հոգ չունեցող մարդկանց կարգը դնելով, աղէկ քարոզ մըն ալ կուտայ՝ որկրամոլութեան ինչ գէշ բան ըլլալը ցուցընելու համար :

Ինչ քեզի սովորական որկրամոլներուն նկարագիրը . բայց մեղադրելի ու ծիծաղելի ըլլալու համար՝ հարի չէ որ աս նկարագրիս ամէն մէկ մասը գտնուի վրադ, մէկ երկուքն ալ հերիք է :

*

ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ .

Համայնական դպրոցին բարեկարգութեան միջնէրը :

Համացնավարժ գպրոցը որպէս զի կարենայ բարեկարգութեամբ առաջերթալ, պէտք է որ մէջը ըլլան առ վերակացուներ, ու գրասեղանի գըլխաւորներ . նկարագրութիւններ . գուցակներ . գրասեղաններ . գրատաննունք . գրամաններ . նկարագրութիւններ . միջնունք . գրամանակ ու պատիմ . գրամանակ ու պատիմներ :

Ա . Ու բարեկացուներ : — Համայնակարժ գպրոցի մը մէջ անկարելի է որ վարպետը մինակ կարենայ թէ բան սորվեցընել տղոց և թէ զանոնք կարգի կանոնի մէջ պահէլ . ուստի պէտք է որ աշկերտներուն մէջ ամէննէն ընտիրներէն վեց հոգի ընտրէ կերպարաննունով, և ասոնց ամէն մէկը մէյմէկ օր կատարէ իրեն պաշտօնը :

Իս վերակացուն կը նստի վարպետին մօտ առանձին գրասեղաննով, կամ թէ վարպետին գրասեղանին մէկ ծայրը . ինքը հրաման կուտայ տղոց ջուր խմելու կամ հարկաւորութեան եր-